յայտնի է, նա այժմ թոյլ չի տալիս բէգերին, որ անկարգութիւններ անեն եւ հսկում է նրանց վարք ու բարքի վրայ, բայց ես չէի ուզի, որ վրաց կառավարութիւնը մտածի, թէ ես պաշտպանում եմ նրան. ես, ընդհակառակը, պէտք է ասեմ ձեզ, որ աչալուրջ հետեւում եմ նրան»:

Ժորտանիա.— «Ես երէկ Բորժոմ էի եւ հաստատ գիտեմ, որ Աթաբէկովը դանուում է մեր դէմ պատերազմող հրոսախմբերի գլխին: Նոյնիսկ աւելին կ'ասեմ. նա մեզ մօտ ուղարկեց մի գերի վրացի սպայ հետեւեալ տեսակի վերջնագրով. որովհետեւ Թիֆլիսում ձերբակալուած են երեք թիւրք գործակալներ, որոնք քարոզչութիւն էին անում Արտահանի եւ Բաթումի շրջանները նոր կազմուող մահմեդական պետութիւններին կցուելու օգտին, եթէ մենք նրանց անմիջապէս ազատ չարձակենք, մեր բոլոր գերիների կոկորդը կը կտրեն»:

Զօր. Ուօկկեր.— «Դժբախտաբար, մեզ յաճախ խոստանում են ներկայացնել վաստակներ հաստատելու համար այս կամ այն պարագան, բայց մենք չենք ստանում»:

Ժորտանիա.— «Զօրավարը կարող է իմ հաղորդած փաստի մասին հարցնել այն անգլիացի սպային, որը եկաւ մեզ մօտ նոյն այն գերիի հետ, որը յանձնեց վրաց հրամանատարութեան պարոն Աթաբէգովի վերջնագիրը»:

Զօր. Ուօկկեր.— «Ես պէտք է հրաւիրեմ վարչապետի ուշադրութիւնը այն բանի վրայ, որ թէեւ մտադիր չէի խառնուել Վրաստանի ներքին գործերին, բայց հարկադրուած եմ հաղորդել ձեզ հետեւեալը. «Բորբա» լրագիրը որոշ ժամանակից ի վեր իր էջերում տեղաւորում է յօդուածներ Դաշնակիցների եւ, ի մասնաւորի, Անգլիայի հասցէին, որոնք ես դատում եմ բացարձակապէս անհանդուրժելի: Ես պէտք է նախազգուշացնեմ վրաց կառավարութիւնը, որ եթէ նա չի հրամայի այդ թերթին դադրեցնել նման արշաւանքը եւ այդ կարգի յօդուածները կը շարունակեն տպուել, իսկ Վրաստանի կառավարութիւնը այդ դէպքում չի փակի «Բորբա»ն, ես ինքս ստիպուած կը լինեմ վերջ տալ այդ թերթի գոյութեան՝ տեսնելով նրա մէջ զետեղուած յօդուածներում բացայայտ անարգանք Դաշնակից պետութիւններին»:

Ժորտանիա.— «Նախ եւ առաջ, մենք չունինք նախնական դրաքննութիւն, իսկ երկրորդ՝ Վրաստանի հանրապետութեան մամուլը՝ հանդիսանալով հանրային կարծիքի արտայայտիչ, կարող էր հրատարակել քաղաքացիների յուղուած կարծիքի վիճակն արտայայտող այս կամ այն յօդուածը: Միաժամանակ ես ուզում եմ ասել ձեզ, որ կարդալով բոլոր թերթերը, ես ոչ մէկի մէջ չեմ հանդիպել վիրաւորանք Դաշնակիցների հասցէին կամ որեւէ մեղադրանք՝ ուղղուած Անգլիային կամ անգլիական հրամանատարութեան: Միակ բանը, որ կարմիր թելի պէս անցնում է բոլոր յօդուածներից, այդ ցանկութիւնն է իմանալու, թէ ի՞նչ են ուզում անգլիացիք, որոնք եկել են մեզ մօտ, իբր թէ, կարգ հաստատելու, մինչդեռ նրանց գալով երկիրը աւելի եւ աւելի բռնում են քայքայումն ու անկարգութիւնները: Այնպէս որ, եթէ մամուլի ոճը պիտի փոխուի, նա կը փոխուի դէպքերի փոփոխումով երկրում»:

Զօր. Ուօկկեր.— «Ցոյս ունեմ»:

Ժորտանիա.— «Բայց եթէ կառավարութիւնը տեսնի, որ որեւէ թերթում տպւում են Դաշնակիցների դէմ ուղղուած յօդուածներ, այդպիսի քայլեր մամուլի կողմից մենք ինքներս էլ թոյլ չենք տայ: Իսկ եթէ այդ տեսակէտից որեւէ բան, հետեւելու կարելիութիւն չլինելու պատճառով, բաց է թողնուած, ես խնդրում եմ իմացնել մեզ այդ մասին, եւ կառավարութիւնը ձեռք կ'առնէ ամէն միջոց նրման յօդուածների կրկնութիւնը կանխելու համար»:

Զօր. Ուօկկեր.— «Ես անձամբ չեմ կարդացել, բայց գիտեմ, որ «Սաքարթվելոս»ի մէջ երեւացել է մի յօդուած, որը ցոյց է տալիս, թէ ի՞նչն է մեզ ցանկալի տեսնել մամուլի մէջ, ի հարկէ, Դաշնակիցների վերաբերմամբ: Այժմ ես անցնում եմ գնդ. Շմագայլովին եւ Դենիկինի շարժման կապակցութեամբ ձերբակալուած ռուս սպաների հարցին. Գնդ. Շմագայլովը հիւանդացել է վատ վերաբերումի պատճառով նրա հետ, բայց եթէ նա մեռնի, ես պէտք է նախազգուշացնեմ, որ պատասխա-